*Հավելված*

*Շրջանակային համաձայնագրով գնում կատարելու հրավեր*

## Հարգելի գործընկեր

ՀՀ Շիրակի մարզի Պեմզաշենի Ն/Դ ուսումնական հաստատության 2013թ.-ի կարիքների համար առաջացել է «ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ -11/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում սննդամթերքի ձեռք բերման անհրաժեշտություն:

Ապրանքների մատակարարման պայմանները սահմանված են կից ներկայացվող պայմանագրի նախագծով:

Պեմզաշենի գյուղապետարանի կողմից կազմակերպված ընթացակարգի ծածկագիրն է ՇՄՊՆ/ԴՈՒՀ- ՇՀԱՊՁԲ - 11/2:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Շիրակի մարզի Պեմզաշենի գյուղապետարան, N 1 սենյակ, Էմմա Ցայլոյանին, մինչև 2014թ. հունվարի 31–ը, ժամը 14:00-ը:

Հայտերը կբացվեն, Պեմզաշենի գյուղապետարանի շենքում, Շիրակի մարզ, գ. Պեմզաշեն հասցեում, N 1 սենյակում, 2014թ հունվարի 31 –ին, ժամը 14:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ -11/2» ծածկագրով: ընթացակարգի հրավերով սահմանված կարգին համապատասխան:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Հարգանքով՝

Գնման ընթացակարգի քարտուղար

Էմմա Ցայլոյան

Հավելված 3

<<ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ – 11/13>>ծածկագրով

ընթացակարգի հրավերի

ՇՄՊԳ- ՇՀԱՊՁԲ-11/13 ծածկագրով

մրցութային հանձնաժողովին

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| N | *Ապրանքի անվանումը* | Ֆինանսական գումարը 2014թ Պեմզաշենի Ն/Դ հիմնարկի բյուջեի միջոցների հաշվին | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | ընդամենը |
| 1 | *Հաց մատնաքաշ* | 17.45% | 26.39% | 28.08% | 28.08% | 100% |
| 2 | *Պանիր լոռի* | 18.52% | 21.17% | 28.83% | 31.48% | 100% |
| 3 | *կարագ* | 18.0% | 26.35% | 27.8% | 27.8% | 100% |
| 4 | *յոգուրդ* | 18.0% | 26.0% | 28.0% | 28.0% | 100% |
| 5 | *ձու* | 18.30% | 26.0% | 28.0% | 28.0% | 100% |
| 6 | *Խտացրած կաթ* | 16.67% | 28.57% | 26.19% | 28.57% | 100% |
| 7 | *թթվասեր* | 19.71% | 21.65% | 29.32% | 29.32% | 100% |
| 8 | *Մսի պահածո* | 17.73% | 27.16% | 27.16% | 27.95% | 100% |
| 9 | *Հավի բուդ* | 15.48% | 28.55% | 27.07% | 28.90% | 100% |
| 10 | *Տավարի աղացած միս* | 16.66% | 24.09% | 27.77% | 31.48% | 100% |
| 11 | *Երշիկ* | 20.42% | 20.42% | 27.87% | 31.29% | 100% |
| 12 | *Նրբերշիկ* | 18.75% | 29.18% | 27.60% | 24.47% | 100% |
| 13 | *Ձեթ* | 19.72% | 25.56% | 28.34% | 26.38% | 100% |
| 14 | *Խնձոր* | 16.15% | 35.0% | 24.23% | 24.62% | 100% |
| 15 | *Բանան* | 21.6% | 26.0% | 25.2% | 27.2% | 100% |
| 16 | *Մակարոն* | 15.97% | 31.44% | 25.77% | 26.82% | 100% |
| 17 | *Բրինձ* | 18.59% | 24.59% | 28.41% | 28.41% | 100% |
| 18 | *Հնդկացորեն* | 17.14% | 28.57% | 28.57% | 25.72% | 100% |
| 19 | *Ոլոռ* | 20.49% | 20.70% | 30.58% | 28.23% | 100% |
| 20 | *Ոսպ* | 16.92% | 36.0% | 24.92% | 22.16% | 100% |
| 21 | *Կարտոֆիլ* | 16.0% | 27.0% | 28.0% | 29.0% | 100% |
| 22 | *Կաղամբ* | 15.55% | 24.44% | 28.88% | 31.13% | 100% |
| 23 | *Սոխ* | 17.8% | 26.66% | 26.66% | 28.88% | 100% |
| 24 | *Գազար* | 20.0% | 30.0% | 26.67% | 23.33% | 100% |
| 25 | *Տոմատի մածուկ* | 18.19% | 27.27% | 27.27% | 27.27% | 100% |
| 26 | *Վարունգ* | - | 30.0% | 45.0% | 25.0% | 100% |
| 27 | *Լոլիկ* | - | 30.0% | 45.0% | 25.0% | 100% |
| 28 | *Կանաչի խառը* | 18.19% | 27.27% | 27.27% | 27.27% | 100% |
| 29 | *Շոկոլադ* | 19.69% | 26.22% | 31.14% | 22.95% | 100% |
| 30 | *Կարամել* | 15.68% | 24.5% | 28.45% | 31.37% | 100% |
| 31 | *Վաֆլի* | 14.67% | 20.0% | 32.0% | 33.33% | 100% |
| 32 | *Թխվածքաբլիթ* | 15.73% | 20.0% | 32.0% | 33.33% | 100% |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 33 | *Շաքարավազ* | 17.38% | 26.93% | 27.60% | 28.09% | 100% |
| 34 | *Աղ կերակրի* | 18.19% | 27.27% | 27.27% | 27.27% | 100% |
| 35 | *Թեյ* | 17.80% | 26.66% | 28.88% | 26.66% | 100% |
| 36 | *Աղացած պղպեղ սեվ* | 25.0% | 25.0% | 25.0% | 25.0% | 100% |
| 37 | *Աղացած պղպեղ կարմիր* | 12.5% | 25.0% | 31.25% | 31.25% | 100% |
| 38 | *Հյութ մրգերի* | 17.17% | 27.0% | 27.97% | 27.86% | 100% |

Գնորդ

<u>ՀՀ Շիրակի մարզի Պեմզաշենի Ն/Դ ուսումնական հաստատություն</u>

<u>Բանկ- << ԱՇԻԲ>></u>

<u>Հ/Հ 900202224029</u>

<u>ՀՎՀՀ 06107385</u>

<u>Պեմզաշենի Ն/Դ հիմնարկի տնօրեն Մ Ամիրաղյան</u>

Հավելված 2

<<ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ – 11/2>>ծածկագրով

ընթացակարգի հրավերի

ՇՄՊՆ/ԴՈՒՀ- ՇՀԱՊՁԲ-11/2 ծածկագրով

մրցութային հանձնաժողովին

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| N | *Ապրանքի անվանումը* | Միավորի գինը | *չ/մ* | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| *1* | *Հաց մատնաքաշ* | դրամ | կգ | 369.0 | 558.0 | 594.0 | 594.0 | **2115** |
| | *Պանիր լոռի* | դրամ | կգ | 12.6 | 14.4 | 19.6 | 24.4 | **68** |
| 3 | *կարագ* | դրամ | կգ | 37.0 | 54.0 | 57.0 | 57.0 | **205** |
| 4 | *յոգուրդ* | դրամ | *հատ* | 540.0 | 780.0 | 840.0 | 840.0 | **3000** |
| 5 | *ձու* | դրամ | *Հատ* | 540.0 | 780.0 | 840.0 | 840.0 | **3000** |
| 6 | *Խտացրած կաթ* | դրամ | *տուփ* | 56.0 | 96.0 | 88.0 | 96.0 | **336** |
| 7 | *թթվասեր* | դրամ | *Կգ* | 20.5 | 22.5 | 30.5 | 30.5 | **104** |
| 8 | *Մսի պահածո* | դրամ | *տուփ* | 94.0 | 144.0 | 144.0 | 148.0 | **530** |
| 9 | *Հավի բուդ* | դրամ | *Կգ* | 25.4 | 46.8 | 44.4 | 47.4 | **164** |
| 10 | *Տավարի աղացած միս* | դրամ | *Կգ* | 27.0 | 39.0 | 45.0 | 51.0 | **162** |
| 11 | *Երշիկ* | դրամ | *Կգ* | 19.2 | 19.2 | 26.2 | 29.4 | **94** |
| 12 | *Նրբերշիկ* | դրամ | *կգ* | 36.0 | 56.0 | 53.0 | 47.0 | **192** |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | *Ձեթ* | դրամ | *լիտր* | 14.2 | 18.4 | 20.4 | 19.0 | **72** |
| 14 | *Խնձոր* | դրամ | *կգ* | 84.0 | 182.0 | 126.0 | 128.0 | **520** |
| 15 | *Բանան* | դրամ | *կգ* | 108.0 | 130.0 | 126.0 | 136.0 | **500** |
| 16 | *Մակարոն* | դրամ | *կգ* | 31.0 | 61.0 | 50.0 | 52.0 | **194** |
| 17 | *Բրինձ* | դրամ | *Կգ* | 34.0 | 45.0 | 52.0 | 52.0 | **183** |
| 18 | *Հնդկացորեն* | դրամ | *Կգ* | 18.0 | 30.0 | 30.0 | 27.0 | **105** |
| 19 | *Ոլոռ* | դրամ | *Կգ* | 17.4 | 17.6 | 34.0 | 24.0 | **85** |
| 20 | *Ոսպ* | դրամ | *Կգ* | 11.0 | 23.4 | 16.2 | 14.4 | **65** |
| 21 | *Կարտոֆիլ* | դրամ | *Կգ* | 160.0 | 270.0 | 280.0 | 290.0 | **1000** |
| 22 | *Կաղամբ* | դրամ | *կգ* | 42.0 | 66.0 | 78.0 | 84.0 | **270** |
| 23 | *Սոխ* | դրամ | *Կգ* | 8.0 | 12.0 | 12.0 | 13.0 | **45** |
| 24 | *Գազար* | դրամ | *Կգ* | 6.0 | 9.0 | 8.0 | 7.0 | **30** |
| 25 | *Տոմատի մածուկ* | դրամ | *Կգ* | 8.0 | 12.0 | 12.0 | 12.0 | **44** |
| 26 | *Վարունգ* | դրամ | *Կգ* | - | 60.0 | 90.0 | 50.0 | **200** |
| 27 | *Լոլիկ* | դրամ | *Կգ* | - | 30.0 | 45.0 | 25.0 | **100** |
| 28 | *Կանաչի խառը* | դրամ | *հատ* | 10 | 15 | 15 | 15 | **55** |
| 29 | *Շոկոլադ* | դրամ | *Կգ* | 24.0 | 32.0 | 38.0 | 28.0 | **122** |
| 30 | *Կարամել* | դրամ | *Կգ* | 16.0 | 25.0 | 29.0 | 32.0 | **102** |
| 31 | *Վաֆլի* | դրամ | *Կգ* | 11.0 | 15.0 | 24.0 | 25.0 | **75** |
| 32 | *Թխվածքաբլիթ* | դրամ | *Կգ* | 11.0 | 20.0 | 17.0 | 22.0 | **70** |
| 33 | *Շաքարավազ* | դրամ | *Կգ* | 73.0 | 113.0 | 116.0 | 118.0 | **420** |
| 34 | *Աղ կերակրի* | դրամ | *Կգ* | 10.0 | 15.0 | 15.0 | 15.0 | **55** |
| 35 | *Թեյ* | դրամ | *Տուփ* | 8.0 | 12.0 | 13.0 | 12.0 | **45** |
| 36 | *Աղացած պղպեղ սեւ* | դրամ | *Կգ* | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | **2** |
| 37 | *Աղացած պղպեղ կարմիր* | դրամ | *Կգ* | 1 | 2 | 2.5 | 2.5 | **8** |
| 38 | *Հյութ մրգերի* | դրամ | *լիտր* | 320.0 | 504.0 | 522.0 | 520.0 | **1866** |

Գնորդ

ՀՀ Շիրակի մարզի Պեմզաշենի Ն/Դ ուսումնական հաստատություն

Բանկ- << ԱՇԻԲ>>

Հ/Հ 900202224029

ՀՎՀՀ 06107385

Պեմզաշենի Ն/Դ հիմնարկի տնօրեն Մ Ամիրաղյան

Հավելված 1

<<ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ – 11/2>>ծածկագրով

ընթացակարգի հրավերի

ՇՄՊՆ/ԴՈՒՀ- ՇՀԱՊՁԲ-11/2 ծածկագրով

մրցութային հանձնաժողովին

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Սննդամթերքի

| N | *Անվանումը* | *Տեխնիկական բնութագիրը* | *չ/մ* |
|---|---|---|---|
| *1* | *Հաց մատնաքաշ* | Ցորենի 1-ին տեսակի ալյուրից պատրաստված, ՀՍՏ 31-99: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % | կգ |
| | *Պանիր լոռի* | Պանիր պինդ, կովի կաթից, աղաջրային, սպիտակից մինչև բաց դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 46 % յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: ԳՕՍՏ 7616-85 կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջ-ների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 3 | *կարագ* | Սերուցքային, յուղայնությունը՝71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով, ԳՕՍՏ 37-91 կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված | կգ |
| 4 | *յոգուրդ* | Յոգուրտ (բիո) կենդանական պատրաստված կաթնամթերքից,մրգային առանց կոնսերվանտների | *հատ* |
| 5 | *ձու* | Ձու սեղանի կամ դիետիկ, 1-րդ կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահման ժամկետը՝ 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր, ՀՍՏ 182-2012: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի «Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը | *Հատ* |

| | | | |
|---|---|---|---|
| | | հաստատելու մասին» N 1438-Ն որոշմանը և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % | |
| 6 | *Խտացրած կաթ* | Խտացրած կաթ շաքարով, խոնավությունը՝ 26,5 %-ից ոչ ավելի, սախարոզը 43,5 %-ից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը՝ 28,5 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 48 0T-ից ոչ ավելի, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | *տուփ* |
| 7 | *թթվասեր* | Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 0T, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված "Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % | *Կգ* |
| 8 | *Մսի պահածո* | Պահածոներ տավարի մսի բարձր տեսակի, հերմետիկ փակ մետաղական տարաներով, ԳՕՍՏ 5284-84 կամ համարժեք: Մսի և ճարպի զանգվածային մասը ոչ պակաս 54%-ից, այդ թվում՝ ճարպի զանգվածային մասը ոչ ավելի 17%-ից, քլորիդների զանգվածային մասը 1,2-1,5%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | *տուփ* |
| 9 | *Հավի բուդ* | Հավի բուդ,թարմ,պաղեցրած կամ սառեցված,մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով, պահված 0-ից մինչև 12 °C ջերմաստիճանի պայմաններում, բժշկական փաստաթղթերով, ԳՕՍՏ 21784-76: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված "Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, ՀՍՏ 342-2011, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80%: | *Կգ* |
| 10 | *Տավարի աղացած միս* | Տավարի աղացած միս թարմ կամ սառեցված, առաջին պարարտության: Հերմետիկ փակ տարայով, բարձր տեսակի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված "Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ | *Կգ* |

| | | | |
|---|---|---|---|
| | | հոդվածի: | |
| 11 | *Երշիկ* | Երշիկ եփած՝ պատրաստված տավարի և խոզի մսերից, ըստ ԳՕՍՏ 23670-79 կամ արտադրողի տեխնիկական պայմանների, խոնավությունը ոչ ավելի քան 68%, փաթեթավորած վակուումային կամ առանց, յուրաքանչյուր փաթեթավորման միավորը համապատասխան պիտակավորմամբ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված "Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | *Կգ* |
| 12 | *Նրբերշիկ* | Բարձր տեսակի, պատրաստված տավարի և խոզի կամ տավարի և հորթի մսերից, արհեստական թաղանթով, փաթեթավորումը վակումային կամ ոչ վակումային: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված "Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80 % | *կգ* |
| 13 | *Ձեթ* | Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված, ԳՕՍՏ 1129-93: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | *լիտր* |
| 14 | *Խնձոր* | Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 21122-75, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի"և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | *կգ* |
| 15 | *Բանան* | Բանան թարմ, պտղաբանական II խմբի (71-ից փոքր մինչև 63 մմ ներառյալ), ԳՕՍՏ 4427-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | *կգ* |
| 16 | *Մակարոն* | Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ A (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), В (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման, ԳՕՍՏ 875-92 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | *կգ* |
| 17 | *Բրինձ* | Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, | *Կգ* |

| | | | |
|---|---|---|---|
| | | լայնությունից բաժանվում են 1-իցմինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%, ԳՕՍՏ 6293-90: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված , Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի. | |
| 18 | *Հնդկացորեն* | Գրեչկա I տեսակի, խոնավությունը՝ 14,0%-ից ոչ ավելի, հատիկները՝97,5 % ոչ պակաս,Անվտանգությունը և մակնշումը ՝ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ ՍաՆ ՊիՆ 2.3.2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի,ԳՕՍՏ 5550-74 | *Կգ* |
| 19 | *Ոլոռ* | Չորացրած, կեղևած, դեղին կամ կանաչ գույնի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | *Կգ* |
| 20 | *Ռսպ* | Երեք տեսակի, համասեռ, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ (14,0-17,0) % ոչավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | *Կգ* |
| 21 | *Կարտոֆիլ* | Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, նեղ մասի տրամագիծը 4 սմ-ից ոչ պակաս, տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթա վորումը՝ առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնա կարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | *Կգ* |
| 22 | *Կաղամբ* | (ԳՕՍՏ 26768-85) 55% -վաղահաս, 45%- միջահաս Արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չծլած, մաքուր, մեկ բուսաբանական տեսակի, առանց վնասվածքների: Գլուխները պետք է լինեն լիովին կազմավորված, ամուր, ոչ փխրուն և չլխկած: Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները մաքրված լինեն մինչև կանաչ և սպիտակ տերևների խիտ մակերեսը: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի: Մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, ցրտահարված գլուխների մթերումը չի թույլատրվում: Մաքրված գլուխների քաշը ոչ պակաս - 0.7 կգ | *կգ* |
| 23 | *Սոխ* | Թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, ընտիր տեսակի, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 27166-86, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղբանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | *Կգ* |

| | | | |
|---|---|---|---|
| 24 | *Գազար* | Սովարական և ընտիր տեսակի, ԳՕՍՏ 26767-85: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | *Կգ* |
| 25 | *Տոմատի մածուկ* | Բարձր կամ առաջին տեսակների, ապակե կամ մետաղյա տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ3 տարողությամբ, ԳՕՍՏ 3343-89: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի : | *Կգ* |
| 26 | *Վարունգ* | Վարունգ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի | *Կգ* |
| 27 | *Լոլիկ* | Լոլիկ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի | *Կգ* |
| 28 | *Կանաչի խառը* | Կանաչի տարբեր տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի | *հատ* |
| 29 | *Շոկոլադ* | Ըստ սահմանված բնութագրի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | *Կգ* |
| 30 | *Կարամել* | Կարամելկաթնային, պոմադային, մրգային, ընկույզային, ընկուզամրգային, նշակարկանդային, գրիլյաժային, պրալինե հավելանյութերով:Կախված կոնֆետի տեսակից խոնավության զանգվածային մասը՝ 4-25 %-ից ոչ ավել, ԳՕՍՏ 4570-93 կամ համարժեք, փաթեթավորումը՝ նրբաթիթեղի և թղթի մեջ, չփաթաթված՝ հատավոր, կշռածրարված տուփերով, խառը տեսականիով, ԳՕՍՏ 4570-93 կամ համարժեք:Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդհոդվածի | *Կգ* |
| 31 | *Վաֆլի* | Շոկոլադապատ կամ վանելինային միջուկով չափածրարված և առանց, չափածրարված տուփերով կամ կշռով : Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80 % | *Կգ* |
| 32 | *Թխվածքաբլիթ* | Գեղարվեստական ձևավորմամբ, փխրուն կամ | *Կգ* |

| | | | |
|---|---|---|---|
| | | բիսկվիթային թխվածք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, արտասահմանյան արտադրության, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80 % | |
| 33 | *Շաքարավազ* | Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել, ГОՍТ 21-94 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը՝ մատակարարման պահին սահմանված ժամկետի 50%-ից ոչ պակաս | *Կգ* |
| 34 | *Աղ կերակրի* | Կերակրի աղ՝ բարձր տեսակի, յոդացված ՀՍՏ 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս: | *Կգ* |
| 35 | *Թեյ* | Բայխաթեյ սև չափածրարված և առանց, խոշոր տերևներով, հատիկավորված և մանր: Միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված են 2, 2,5 և 3 գ փաթեթներով: "Փունջ", բարձրորակ և I տեսակների, ГОՍТ 1937-90 կամ ГОՍТ1938-90: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | *Տուփ* |
| 36 | *Աղացած պղպեղ սև* | Միջին կամ թույլ կծվությամբ համեմունք աղացած, խոնավության զանգվածային մասը՝ 10%-ից ոչ ավելի, մոխրի առկայությունը՝ 6%-ից ոչ ավել, փաթեթավորումը՝ չափածրարված 0,015 կգ-ից մինչև 5 կգ զանգվածներով, թղթե կամ ստվարաթղթե կամ պոլիէթիլենային տոպրակներում, ГОՍТ 29053-91: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | *Կգ* |
| 37 | *Աղացած պղպեղ կարմիր* | Միջին կամ թույլ կծվությամբ համեմունք աղացած, խոնավության զանգվածային մասը՝ 10%-ից ոչ ավելի, մոխրի առկայությունը՝ 9%-ից ոչ ավել, փաթեթավորումը՝ չափածրարված 0,015 կգ-ից մինչև 5 կգ զանգվածներով, թղթե կամ ստվարաթղթե կամ պոլիէթիլենային տոպրակներում, ГОՍТ 29053-91: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | *Կգ* |
| 38 | *Հյութ մրգերի* | Մրգահյութեր՝ պատրաստված թարմ մրգերից և պտուղներից, պտղամսով, շաքարի օշարակի հավելումով կամ առանց դրա, արտաքին տեսքով պարզ՝ նստվածքի զանգվածային մասը 0,2% ոչ ավելի և ոչ պարզ՝ 0,8% ոչ պակաս, ГОՍТ Ռ 52184-2003, ГОՍТ | *Լիտր* |

| | | | |
|---|---|---|---|
| | | Ռ 52185-2003 կամ ԳՕՍՏ Ռ 52186-2003: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-ի թիվ 744-Ն որոշմամբ հաստատված “Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի”, “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | |
| | | | |

Գնորդ

ՀՀ Շիրակի մարզի Պեմզաշենի նախադպրոցական

Ուսումնական հաստատություն

Բանկ- << ԱՇԻԲ»

Հ/Հ 900202224029

ՀՎՀՀ 06107385

Պեմզաշենի Ն/Դ ուսումնական հաստատության տնօրեն Մ Ամիրաղյան

Սննդամթերքի գնման պայմանագիր
N ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ 11/2
նախագիծ

ք. __________ «----- »----------------20-----թ.

Պեմզաշենի Ն/Դ ուս. հաստատություն ի դեմս տնօրեն՝ Մ. Ամիրաղյանի, որը գործում է __________ կանոնադրության հիման վրա /այսուհետև՝ Գնորդ/, մի կողմից, և __________________________________ ի դեմս ընկերության տնօրեն ____________________________________ այսուհետև վաճառող/, մյուսկողմից, կնքեցինսույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված __սննդամթերքը______/ այսուհետև՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2.Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի , երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա/ Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ/ Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումիցհետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գներիմիջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծելսույն պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կոմից պայմանագիրը խախտելն էական է համարվում , եթե՝

ա/մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որըչի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ/ խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է `**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում , ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել վաճառողին:

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները ,իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո ` ողջամիտ ժամկետում , երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ` ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի`**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումիցհետո` ողջամիտ ժամկետում այլ անձի ` Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր , սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք` համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գներիմիջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելումիջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված , սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.4 Վաճառողը պարտավոր է`**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը` սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող` ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմիցսույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան` պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն , ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու , այն հրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն պայմանագրի լուծումիցհետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման /կանխավճարի/ ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

**4. Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ____________ /________________________________/

ՀՀ դրամ` ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ /պահումներ/ կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող /կանխավճարի մարվող/ գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ` դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման – ընդունման արձանագրության հիման վրա` N 3 հավելվածով` վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկյային օրվա ընթացքում/, բայց ոչ ավելի քան նույն հավելվածով վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման

ժամանակացույցով նախատեսված միջոցներըչեն բավարարում, ապա վճարումը սույնկետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

**5. Ապրանքի որակը և երաշխիքը**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողիմիջև հանձնման-ընդունման արձանագրության / այսուհետ՝ արձանագրություն/ ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իրկողմից ստորագրված հանձնման –ընդունման արձանագրության երկու օրինակ / հավելվածN 4/:

6.2 Արձանագրությունը ստորագրվում է եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, հակառակ դեպքեւմ ՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում , արձանագրություն չի ստորագրվում, և պատվիրատուն ՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները

բ/ վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման- ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իրկողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմիցսույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 / զրո ամբողջ հինգ հարյուրերորդական/ տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակակարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 / զրո ամբողջ հինգ տասնորդական/ տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տուժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմիցսույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 տոկոսի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերնիրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերինչի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուցհետո, և որըկողմերըչէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը , քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք

ամսից ավելի , ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունիլուծել պայմանգիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուսկողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Սույն պայմանագիրը ուժիմեջէ մտնումկողմերի ստորագրման պահից:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է , որ գնման գործընթացում մինչև պայմանգրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր /տեղեկություններ և տվյալներ/, կամ Վաճառողին հաղթող ճանաչելու / ընտրելու / մասին որոշումըչի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմագիրը չկնքելու համար: Ընդ որում Գնորդը չիկրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտիռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իրմեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որըչի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` նոր պայմագիր կնքելումիջոցով, որը կհանդիսանա սույն պայմնագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվելկողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվելկողմերի փոխադարձ համաձայնությամբ` բացառությամբ կետ

1/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի, ընդ որում` պայմանագրի կողմերին պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումըկարալու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում:

2/ Սույն պայմանգրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան 20 տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գներըորոշվում են և դրանց փոփոխությունը գնահատվում է հետյալ կերպ

____________________________________________________________________________________________________________________________________________________________________________________________________________________________________

<u>կարգը սահմանվում է պայմագրով նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ</u>

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ ,որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների ձեռքբերվող գնման առարկաների միավոր գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում ` պայմանով , որ Գնորդի մոտչի վերացել գնման առակայի օգտագործման պահանջը:

9.5 Սսույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի /Վաճառող և /կամ/ Գնորդ/ օգուտները /խնայողություններ/ և /կամ/ կրած վնասները տվյալ կողմիօգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված

հարաբերությունները կարգավորող նորմերով և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերըլուվում են բանակցությունների միջոցով: համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերըլուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է __5__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնքունեն հավասարազոր իրավաբանական ուժ:սույն պայմանագրի NN 1,2,3 և 4 հավելվածները բաղկացած ____ թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմինտրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գնորդ

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ Շիրակի մարզի Պեմզաշենի Ն/Դ ուսումնական հաստատություն

Բանկ- << ԱՇԻԲ>>

Հ/Հ 900202224029

ՀՎՀՀ 06107385

Պեմզաշենի Ն/Դ հիմնարկի տնօրեն Մ Ամիրաղյան

Կ. Տ

Կ. Տ